Եւ Չշիս (10 Ապրիլ) իլք նամազ էր։ Դէմ անկաւ հացն և Բ–նոց արարին զհաց ամենեցուն Բշի տրամ։ Եւ օրս ի փուռն գնացաք և հիսապ արարին։

Եւ Շաբաթ օրս (11 Ապրիլ) տիւան ոչ արարին վասն հիւանդանալոյ վէզիրին։ Եւ աւուրքս զմեծ էֆէնտին մանզուլ արարին և եղին ի տեղի նորին զորդի Աբդռահիմին։

Եւ Կիրակիս (12 Ապրիլ) Աշխարհամատրանի. Տէր Աստուածատուրն ի մերս էր և տարայ զնա ի փուռն և անտի ի խանն ուղևորեցի։

Եւ Եշիս (16 Ապրիլ) գնաց Տէր Աստուածատուրն Թոխաթցի և ընդ նմին յիսկէլէն իջայ։ Եւ օրս գնայր սուրբ էմինին Տաճկաց որ ի Բեապէ՝ անցեալ յՈւսկիւտարն մեծաւ փառօք որպէս օրէն էր։

Եւ Չշիս (17 Ապրիլ) ժողով արար Աստուածատուր վարդապետն (Ռէբի)։

Շաբաթս (18 Ապրիլ) տիւան եղեւ։

Կիրակի ԺԹ–իս ի Ղալաթա գնացաք ի գերեզմաններն, և անտի՝ ի Մահտեսի Կիրակոսենց ի տեսանել զնա, զի հիւանդացեալ էր յայնմ շաբաթու. և եկեալ յեկեղեցի Սուրբ Լուսաւորչի ի վարդապետի (Աստուածատուր) մօտն, զի անդ ևս գնացել էր բարով մնա ասել։

Բշի (20 Ապրիլ) գնաց վարդապետն ի յՈւսկիւտարն։ Օրերքս Հռոմայի եպիսկոպոս մի Հռոմոց էառ զպատրիարգութիւնն ինքնագլուխ, ոչ կամաւ իշխանացն աղգին իւր և ոչ ևս եպիսկոպոսօք նստեալ յաթոռն, որպէս օրէն էր նոցա, այլ բռնութեամբ՝ տվեալ բաղում դրամս վէզիրին և նստեալ։

Առաւօտուս կռվեցան Տէրտէրն իմ և Էսիլի թոռն։ Օրս Հոգևորտէրն (Թորոս) ի Սուրբ Նիկողոս եկն նաւով ի Պալատէ և հիւանդ էր։

Դշի օրս (22 Ապրիլ) գնացաք ի յՈւսկիւտարն մօտ ի վարդապետն և անդ կացեալ մեր, եկին յամենայն